ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2025-Ա « 21 » մայիսի 2025 թ.

«ԵՐԵՎԱՆԻ Մ. ՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.86 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ԴԻԱՆՆԱ
ՌԱՖԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 37.1-ին, 37.2-րդ, 39-րդ կետերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի 2025 թվականի ապրիլի 21-ի N 251 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի մայիսի 15-ի հ. 25655-25 գրությունը՝

1. Դիաննա Ռաֆիկի Հայրապետյանին՝ 2025 թվականի մայիսի 22-ից՝ 1 տարի փորձաշրջանով նշանակել «Երևանի Մ. Սարյանի անվան հ.86 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2025 թվականի մայիսի 22-ից մինչև 2030 թվականի մայիսի 22-ը ներառյալ:

2. «Երևանի Մ. Սարյանի անվան հ.86 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Դիաննա Հայրապետյանի փորձաշրջանի ղեկավար նշանակել «Երևանի հ.152 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ժաննա Հարությունյանին:

3. «Երևանի Մ. Սարյանի անվան հ.86 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի

տեղակալ Նադիա Բաննահյանին ազատել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պարտականությունների կատարումից:

4. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ